# ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Լոյս տեսած է Երրորդ Ալբոմը որ պարունակում է իւր մէջ 20 մեծադիր լուսանկար պատկերներ Վայոց Ձորում գտնուած-ներից, իւրեանց անցեալ և ներկայ համառօտ ծանօթութեամբ, աւելի հարուստ և ճոխ է քան առաջին և Երկրորդ Ալբոմը. գի-նը ճանապարհածախսով 10 ռուբ. կազմածին. իսկ անկազմը 50 կոպ. պակաս. ստանալ ցանկացողները թէ առաջին թէ երկ-րորդ և թէ երրորդ Ալբոմների համար դիմում են Эчміадзинъ Типографическій Комитетъ, կամ ուղղակի կազմողին՝ Վա-ղարշապատ լուսանկար Մ. Փափազեանց:

Վաճառվում է

Նաև լուսանկար Մ. Փափազեանի կազմած Հին և Նոր Կտա-կարանի լուսանկար պատկերներ նուրբ և մանր, թւով 40 հատ — որոնք բաժանուած են երկու մասի. իւրաքանչիւր մաս 20 հատական, մէկ մի մաս ձեռակալով՝ ընթերցով. գինը 6 ռուբ. ճանապարհածախսով, ցանկացողները դիմում են Վաղարշա-պատ լուսանկար Մ. Փափազեանցին:

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆՔ·

Սորանով յայտնում ենք ի գիտութիւն համալսարանական ուսումնաւարտ անձանց, որ առաջիկայ սեպտեմբեր ամսից հարկաւոր են Ճեմարանում ուսուցիչներ հետեւեալ առարկաների համար:

1· Ռուսաց Պատմութեան եւ Ռուսաց Գրականութեան համար (Նախկին ուսուցիչ պ· Լիսիցեանցի դասերը),

2· Ֆիզիքայի եւ Մաթեմատիքայի համար (Նախկին ուսուցիչ պ· Խօջայեանցի դասերը),

3· Հայոց լեզուի եւ Հայոց Պատմութեան համար (Նախկին ուս· պ· Քարամեանցի դասերը),

4· Ռուսաց լեզուի եւ Ընդհանուր Գրականութեան համար (Նախկին ուս· պ· Յ· Յովհաննէսեանի դասերը),

5· Ֆրանսերէնի համար (Նախ· ուս· պ· Պիտանեանի դասերը):

Այս առարկաների դասատուութիւնը ստանձնել ցանկացողները պէտք է վաղօրօք իրենց խնդրագրով դիմեն Էջմիածին՝ Հոգեւոր Ճեմարանի Տեսչին:

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ·

28 Մայիսի 1891 թ·
Էջմիածին·

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Այսու ծանուցանի ի գիտութիւն Տեսչութեանց և ուսուցչաց ի Թեմական Հոգևոր դպրանոցս, թէ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մտանել յառաջին Լսարան Ճեմարանիս, հետևեալքն են։

**ԿՐՕՆ**

1. Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ։
2. Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ եկեղեցւոյ, ընդարձակ։
3. Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ։
4. Ծանօթութիւն Աւետարանչացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց։

**ԼԵԶՈՒՔ**

1. Հայոց լեզու, գրաբար շարադրութիւն։
2. Ռուսաց լեզու, շարադրութիւն։
3. Փրանսերէն լեզու, թարգմանութիւն։

Նոյնք ըստ դպրոցական ծրագրի։

Այսոքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ուսեալ գոլով գիմնազիական ուսումն դպրոցական ընթացից, ցանկան մտանել ի Ճեմարան մինչև անցեալ իցէ աւելի քան զամ մի ի թուականէ աւարտման գիմնազիականին. իսկ եթէ աւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննել յամենայն առարկայս դպրոցական ընթացից, ըստ 7-րդ յօդուածոյ ծանուցման Վարչութեանս։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ։